



## ՉՈՒՅԵՐԻԱ ՊԻՏԻ ՀԻՐԸՆԿԱԼԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԺՈՂՈՎ ՄԸ

Լիբանանի մեջ գտնուող երրորդական դիվանագիտական աղբյուր մը յայտարարեց, թէ զուգորդական իշխանությունները կը մտածեն լիբանանեան քաղաքական գա-



նազան կողմեր եւ քաղաքացիական շարժումի անդամներ ժողովի մը հրավիրել, քննարկելու համար երկրին մէջ տարակարծութիւն պատճառով հարցեր: Նպատակն է նոր ընկերային համակարգի մը հաստատումը երկրին մէջ: Ըստ «Սփոթինթ»-ի, զուգորդական կառավարութիւնը լիբանանեան կառավարութեան ուղարկած է թղթածրարներ՝ այս ժողովին վերաբերող, պատրաստուած լիբանանեան քաղաքացիական շարժումի անդամներու կողմէ:

### ՆԱԿԱՆԳԻՍՏԻ ՊԱՅՅՈՒՄԻՆ ՉՈՅԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ

Պէյրուսի նախագահի պայթումին զոհերու ընտանիքները բողոքի ցոյց մը կատարեցին նախագահի ստիւն առջեւ: Անոնք կը պահանջեն չքաղաքականացնել դատա-



կան հողովոյ՞ը եւ արդարադատութեան նախարարէն պահանջեցին չմիջամտել պայթումի դատական հողովոյ՞թին եւ դատաւորներ ինք չնշանակել: Անոնք պահանջեցին, որ դատական քննութիւնը ըլլայ թափանցիկ եւ ոչ-գաղտնի:

### ՇԵՆՔԵՐԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութեան Միջին Արեւելքի բաժնի նախկին պատասխանատու Տէյվիտ Շենքեր յայտարարեց, թէ հակառակ Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ ստորագրուելիք սահմանագծումի համաձայնագիրին, տակաւին Իսրայէլի եւ Հնդկաստանի միջեւ բախումի հաւանականութիւնը կը մնայ բարձր:

Ըստ Շենքերի, երկու կողմերուն միջեւ ստորագրուելիք համաձայնագիրը չ'երաշխաւորէր Իսրայէլի ապահովութիւնը: Ան համաձայնագիրը համարեց Լիբանանի ի նպաստ: Իսկ Իսրայէլ պիտի շահի ապահով ծովային գոտի մը երկու երկիրներուն միջեւ:

## 63 ՉՈՂ ԻՐԱՆԻ ՄԷՉ

«Իրան Գիւմըն Ռայց» կազմակերպութիւնը յայտարարեց, թէ անցեալ շաբթուան ընթացքին 63 ցուցարարներ



զոհ գացին ոստիկանական ուժերու կողմէ՝ ցոյցին բռնի ցրումի, Չահատան քաղաքին մէջ: Այս քաղաքը հարաւարեւելեան Պալուշխթան նահանգին մայրաքաղաքն է:

### ԲԱՆԱԿԻՆ ԹԻՐԱՆԸ

Իսրայէլի պաշտպանութեան նախարար Պենի կանց յայտարարեց, թէ ամէն անձ որ կրակ կը բանայ Իսրայէլի քաղաքացիներու վրայ, պիտի դառնայ բանակին թիրախը: Ան գրաւեալ Արեւմտեան ափին մէջ տեղի ունեցած զինեալ շարժումը նկատեց անկախ որեւէ կազմակերպութեան եւ զայն համարեց անհատներու գործ:

## ՄԱԿ ԶՈՒՍԱԿԻԱԲ

Միացեալ ազգերու կազմակերպութիւնը յայտնեց իր յուսախաբութիւնը Եմենի մէջ զինադուլը չ'երկարաձգուելու:



լուն համար: Սակայն խօսակը յայտարարեց, թէ տակաւին յոյսը չ'է կորսնցուցած որ երկու կողմերը համաձայնութեան կրնան հասնիլ:

### ԱՄՆ ՆԵՏՈՒԿ ՊԻՏԻ ԿԱՆԳՆԻ ԾԱՓՈՒՆԻՆ

Միացեալ Նահանգներու Նախագահ Ծօ Պայտըն իր երկրին նեցուկը յայտնեց ճափոնին, Հիւսիսային Զորեայի կա-



տարած հրթիռարձակումէն ետք: ԱՄՆ, Երրորդական միութիւն, Ճափոն եւ Հարաւային Զորեա դատապարտած էին Հիւսիսային Զորեայի հրթիռարձակումը ճափոնի վրայն:

### ՊԱՅՅՈՒՄ ՊՈՒԿԱՐԻՈՅ ՄԷՉ

Պայթում տեղի ունեցած է Պուկարիոյ գէնքի ամենահին գործարանին մէջ: Երկրի կեդրոնական մասին մէջ



գտնուող Զագակաք ավանին մէջ մարդ մը սպաննուած է եւ երկու կիներ կորսուած են դէպքին պատճառով: «Արսե-նալ» գէնքի գործարանը միակն էր, որ նախկին Խորհրդային միութենէն դուրս կ'արտադրէր «Զալաշիլըզ» տիպի հրացաններ:

### ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒԹԵՐ ԿԸ ԶԱՇՈՒՆ

«Ա.Ֆ.Փ.» լրատու գործակալութիւնը հաղորդեց, թէ ռուսական ուժեր Խերսոն նահանգին մէջ կը քաշուին իրենց կարգ մը դիրքերէն, մանաւանդ Տեքեր գետի արեւմտեան ափէն: Շրջանին մէջ կը նկատուի ուքրանական ուժերու հակայարձակում բոլոր ուղղութիւններով:

### ՇՈՒԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՆԿԱՐԱՅԻ ՄԷՉ

Թրքական «Անատոլ» լրատու գործակալութիւնը յայտարարեց, թէ շուեթական Արդարադատութեան նախարարութենէն պատուիրակութիւն մը պիտի այցելէ Թուրքիա: Օրակարգի նիւթ պիտի ըլլայ Շուեթի մէջ գտնուող կարգ մը ամբաստանեալներու յանձնումը թրքական իշխանութիւններուն: Անոնք Թուրքիոյ կողմէ կ'ամբաստանուին ահաբեկչութեամբ: Մատրիտի մէջ գումարուած ՆԱԹՕ-ի գազաթաժողովին, Թուրքիա, Շուեթ եւ Ֆիլիպինտա ստորագրած էին եռակողմ համաձայնագիր մը, ըստ որուն, Թուրքիոյ կողմէ ահաբեկչութեամբ ամբաստանուած անձեր պետք է յանձնուէին Թուրքիոյ: Այս մէկը թրքական պայմանն էր ՆԱԹՕ-ի մէջ Շուեթի եւ Ֆիլիպինտայի ըմբռնման համար:

### ՌՈՒՍԻԱ ՊԻՏԻ ՊԱՅԷ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Ռուսիոյ Դաշնութեան Արտաքին գործերու նախարարութեան մէջ զինուելու սահմանափակումի եւ հիւլեական



զէնքի սահմանափակումի բաժնի պատասխանատու Զինսթանթին Վորոնցով յայտարարեց, թէ Ռուսիա պիտի

## ԱՏՐՊԵՅՃԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՑ 17 ԳԵՐԻ

Հայաստանի Պաշտպանութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ Ատրպէյճան, ընդառաջելով ամերիկեան միջնորդութեան, Հայաստանին վերադարձուց 17 գերի:



Վարչապետ Նիկոլ Փաշինեան հրապարակեց յայտարարութիւն մը այս առիթով, որուն մէջ շնորհակալութիւն յայտնեց ԱՄՆ-ին այս ուղղութեամբ կատարած իր ճիգին համար: Ան բարձրօրէն գնահատեց ԱՄՆ-ի կատարած դերը: Ան յոյս յայտնեց, որ Հայաստանի միջազգային գործընկերներու ճիգով, մարդկային հարցերու կողքին նաեւ լուծում կը գտնուի ապահովութեան հարցին եւ խաղաղու-թիւնը կը տիրէ տարածաշրջանին մէջ:

### ՄԻՐՉՈՅԵԱՆ-ՊԱՅՐԱՄՈՎ-ՊԼԻՆԸՆ ԺՈՂՈՎ

ԱՄՆ-ի նախաձեռնութեամբ տեղի ունեցած է Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միր-



զոյեանի, Ատրպէյճանի արտաքին գործերու նախարար Ժէյիւն Պայրամովի եւ ԱՄՆ-ի արտաքին գործերու նախարար Ալեքսի Պիլքընի միջեւ հեռախօսակցոյց:

Կողմերը իրենց կարծիքները յայտնած են 2 Հոկտեմբերին ժընեւի մէջ տեղի ունեցած ժողովին վերաբերեալ: Միրզոյեան անգամ մը եւս պահանջած է Ատրպէյճանական ուժերու հեռացումը Հայաստանի Հանրապետութեան գրաւեալ տարածքներէն: Ան պահանջած է նաեւ գերիներու վերադարձ եւ զինադարձի ամրապնդում: Ան անընդունելի գտած է զէնքի սպանալիքով զիջում պահանջելու ձեւը:

Կողմերը միտքեր փոխանակած են Հայաստան-Ատրպէյճան խաղաղութեան համաձայնագիրին մշակման վերաբերեալ, նաեւ քննարկուած է Պաքու-Ստեփանակերտ քննարկումներու համակարգ հաստատելու գաղափարը:

### ԹՈՒՐԵՒՈՅ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԱՔՈՒՄԷՉ

Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Հոլուսի Աքար պաշտօնական այցելութեամբ մը հասած է Պաքու: Անոր



զխաւորած պատուիրակութեան մէջ է Թուրքիոյ զինեալ ուժերու շտաբի պետ Եաշար Կիլիչ: Այս այցելութիւնը նախապէս չ'էր յայտարարուած:

պահէ իր տուած խոստումը՝ հիւլեական պատերազմի չ'էմանարկելու համար: Այս խոստումը կատարուած էր ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի մնայուն անդամ հինգ երկիրներուն կողմէ:

### «ՆՈՐՏ ՍԹՐԻՄ»Ի ԿԱԶԻ ՏԱԳԱՊ

Շուեթի ծովուց յայտարարեց, թէ անցեալ շաբթուան ընթացքին պայթումի ենթարկուած «Նորտ Սթրիմ» խողովակէն տակաւին կազի փախուստ կայ: Պայթումը տեղի ունեցած էր դանիական Պորնհոլմ կղզիէն քիչ մը հեռու շրջանի մը մէջ: Ոստիկանութիւնը շրջանը յայտարարեց վտանգաւոր գոտի եւ արգիլեց նաւարկութիւնը հինգ ծովային մղոն տրամագիծով շրջանին մէջ:

ԱԼԵՆ ՄԻՍՈՆԵԱՆ.

«ԱՅՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԻՇՄԱՆՈՒԹԻՒՆԸ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԲՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՆՆԱԿԱՅ ԶԵՆ»

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը քննարկման ենթակայ չեն: Այս մասին ըսաւ ԲՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Միսոնեան:



Անդրադառնալով Ատրպեյճանի՝ խաղաղության պայմանագրի համար ներկայացուցած 5 կետերուն՝ Միսոնեան ըսաւ. «Մենք որեւիցէ պահանջ չենք ընդունած, եւ որեւիցէ փաստաթուղթ չկայ»:

Ան չի օսեցաւ խաղաղության պայմանագրի համար Հայաստանի առաջարկներուն մասին, քանի որ, իր վստահեցմամբ, այդ առաջարկները դեռ չեն քննարկուած, չեն որոշուած:

Անդրադառնալով հարցին, թէ արդեօք ատրպեյճանցի զինուորականներու կողմէ հայ զերիները գնդակահարելու տեսանկյունից յետոյ իրական է իշխանության համար խաղաղության օրակարգը՝ Միսոնեան դրական պատասխան տուաւ: «Որպէսզի նման տեսանկյունից այլեւս չըլլան: Բոլոր մարդիկ, որոնք խաղաղության օրակարգի առնչութեամբ բացասական բան կ'ըսեն, իսկ առաջարկը ո՞րն է, յաւերժ պատերազմ», ըսաւ Միսոնեան:

Ազգային ժողովի նախագահը այս ծիրին մէջ ընդգծեց, որ պաշտպանական պիտոճէն անսխալեպ աճ ունի, կը շարունակեն բանակը զինել, խաղաղության օրակարգը չի նշանակեր, թէ բանակ պէտք չէ ըլլայ: Այն բոլոր կենացներուն, որոնք մենք կը սիրենք յաճախ ըսել՝ «ծով ծով Հայաստան, պիտի մտնենք գրաւենք», կը ներքե, այդ խօսակցութիւններուն լուրջ չէմ վերաբերիր: Մենք չենք կըրնար ժամանակակից աշխարհին մէջ զբաղիլ հարեաններուն նկատմամբ ռազմատենչ յայտարարութիւններով եւ տարածքային պահանջներով», ըսաւ ԱԺ նախագահը՝ կրկնելով, որ ԲՀ ինքնիշխանութիւնը քննարկման ենթակայ չէ:

Ան ընդգծեց. «Մենք պատերազմ պիտի չընենք, մենք պիտի պատրաստուինք Հայաստանի պաշտպանելու»:

ԱԺ նախագահը վստահեցուց, որ հիմա կը զբաղին շատ հարցերու լուծմամբ, այդ շարքին՝ Ջերմուկի շուրջ ստեղծուած իրավիճակով: «Բայց այդ հարցերու լուծումը չի կրնար ըլլալ Թուրքիոյ, Ատրպեյճանի կամ որեւէ այլ երկրի վրայ յարձակիլը: Մենք այդ հնարաւորութիւնը չունինք՝ մեր փոքր երկիր լինելու բերումով, վերջին իրադարձութիւններէն ելլելով եւ շատ ու շատ հանգամանքներ ելլելով», ըսաւ ան:

Անդրադառնալով Ռուսիոյ՝ ԱԺ նախագահը ըսաւ, որ բոլոր մեծ պետութիւնները, այդ շարքին՝ Ռուսիան, ունին իրենց շահերը: «Յաճախ կը խօսին, թէ այս մէկը կը սիրէ, այս մէկը չի սիրեր: Մեր հասկացողութիւնը շատ էական բան չէ, պետութիւնները ունին իրենց շահերը, որոնք յառաջ կը տանին: Այլ հարց է, թէ ինչպէս մենք պիտի կարենանք այդ շահերուն դիմակայել, ինչ հակակշիռներ պիտի գտնենք: Գրեթէ ամենուր կ'աճ պատերազմ է, կ'աճ նախապատերազմական իրավիճակ, մենք ի՞նչ էլքեր պիտի գտնենք այդ իրավիճակէն դուրս գալու: Իսկ ես կը կարծեմ, որ այս պահի դրութեամբ մենք առաւելագոյնը կ'ընենք եւ պիտի շարունակենք ընել», ըսաւ Ազգային ժողովի նախագահը:

«ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԵՉ ԱՅՂ ՇԱՏ ՊԱՇԱՆՁՈՒԿՈՒ ԴՐՄԱՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ Է» ԱՐՏԱԿ ԲԵԿԼԱՐԵԱՆԸ՝ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ ԱՐՅԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ



Արցախի Հանրապետության պետական նախարար Արտակ Բեկլարեան Ֆեյսապուրի իր Էջով գրառում կատարած է՝ անդրադառնալով Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեանի՝ Ռուբեն Վարդանեանը պետական նախարար նշանակելու առաջարկին վերաբերեալ յայտարարութեան:

ԱՐԱՐԱՏ ՄԻՐՉՈՅՆԵՆԸ ՈՒՎՅԱՅԷԼ ՄԱՐԻՎՏՈ ԿՐՈՍԻԻ ՀԵՏ ՀԱՆԳԻՊՄԱՆ ԸՆԹԱՅԲԻՆ ԱՆԳՐԱԿԱՐԶՈՒ Է ՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՐԷԱԿԱՆ ԵԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ԵՆԿՏՐՈՎԱԿԱՆ ԵՎ ԵՎԵՐԿԱՆՆԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԿՊՈՒՄԸ ԱՆԿԱՐԿԻ ՇԱՀԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

ԲՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան հանդիպած է աշխատանքային այցով Հայաստան գտնուող Հիւլէական ուժանիւթի միջազգային գործակալութեան (ՀՈՄԳ) գլխաւոր տնօրէն Ռաֆայէլ Մարիանօ Կրոսիի հետ:

Արարատ Միրզոյեան ընդգծած է, որ Հայաստանը, որպէս հիւլէական էլեկտրակայան շահագործող երկիր, կը կարելորէ ՀՈՄԳ-ի հետ հաստատուած արդիւնաւետ համագործակցութեան զարգացում՝ ուղղուած միջուկային ուժանիւթի խաղաղ, անվտանգ եւ ապահով օգտագործման:



Հայկական կողմը բարձր գնահատած է Գործակալութեան տեխնիկական համագործակցութեան ծրագրի եւ ՀՈՄԳ առաքելութիւններու դերը, որոնք հիմնարար նշանակութիւն ունին հիւլէական էլեկտրակայանի անվտանգ երկարաժամկետ շահագործման համար: Այս ծիրին մէջ նախարար Միրզոյեան ընդգծած է Հայկական հիւլէական էլեկտրակայանիմ նկատմամբ հնչած սպառնալիքներուն, ինչպէս նաեւ էլեկտրակայանի շահագործման հետ կապուած անհարկի շահարկումներու անթոյլատրելիութիւնը:

Ռաֆայէլ Կրոսիի նշած է, որ Հայաստանը ՀՈՄԳ-ի վստահելի գործընկեր է եւ առանձնապատուկ շեշտած է Հայաստանի թափանցիկ գործելանոճը եւ ՀՈՄԳ առաքելութիւններու առաջարկութիւններու հետեւողական հասցեագրումը:

Զրուցակիցները գոհունակութեամբ արձանագրած են, որ Հայաստան-ՀՈՄԳ ծաւալուն օրակարգը իր մէջ կը ներառէ ինչպէս միջուկային անվտանգութեան եւ ուժանիւթի, այնպէս ալ՝ շրջակայ միջավայրի, առողջապահութեան, արտակարգ իրավիճակներու եւ այլ բնագաւառներ: Այս ծիրին մէջ Հայաստանի արտաքին գործերու նախարարը կարեւորած է վերոնշեալ ուղղութիւններով Գործակալութեան ֆինանսական եւ մասնագիտական աջակցութեամբ իրականացուող ծրագիրները:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ տարածաշրջանային անվտանգութեան վերաբերող շարք մը հարցերու:

ՀԱՄԱՅՈՒՅՄԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՅԻՆ 8-ՐԴ ԽԱՂԵՐԸ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ 2023 ԹՈՒՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻՆ

ԲՀ կառավարութեան՝ 29 Սեպտեմբերի նիստին հաստատուած արձանագրած է Համահայկական ամառային 8-րդ խաղերու կազմակերպման եւ կայացման կազմակերպչական կոմիտէ ստեղծելու եւ անոր անհատական կազմը հաստատելու մասին որոշման նախագիծը:

Համահայկական ամառային 8-րդ խաղերը տեղի պիտի ունենան Օգոստոս 2023-ին:



Խաղերը պատշաճ ու բարձր մակարդակով կազմակերպելու եւ անցընելու նպատակով ստեղծուած է կազմակերպչական կոմիտէ, որուն նախագահը ԲՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Յարութիւնեանն է: Կոմիտէի կազմին մէջ ընդգրկուած են նաեւ ԲՀ կրթութեան գիտութեան, մշակոյթի եւ մարմնակրթութեան նախարար Վահրամ Տումանեանը եւ նախարարի տեղակալ Կարէն Գիլոյեանը:

Համահայկական ամառային 8-րդ խաղերու բացման հանդիսաւոր արարողութիւնը պիտի կազմակերպուի Կիւմրիի մէջ, իսկ խաղերը տեղի պիտի ունենան Շիրակի եւ Արագածոտնի մարզերու շարք մը քաղաքներու մէջ: Փակման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Երեւանի մէջ:

«ՈՇԷ ՄԵԿՈՒՆ ԱՌՋԵՒ ԵՌԱԲԼՈՒՐԻ ԴՈՆԵՐԸ ՊԵՏՔ ԶԵ ՓԱԿՈՒՆ» ԸՍԱԾ Է ԱՆԴՐԱՆԻԿ ԶՈՉԱՐԵԱՆ

ԲՀ Ազգային ժողովի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Զոչարեան կը կարելորէ պատերազմէն, ցաւոտ իրողութիւններէն յետոյ ոտքի կանգնիլ ու նոր թափով յառաջ շարժուել:

«Այս ամիս լրացաւ 44-օրեայ պատերազմի 2 տարին: Բայց 44-օրեայ պատերազմէն յետոյ մենք ապրեցանք կարճատեւ դաժան կռիւներ, որոնք համար կրկին շատ թանկ վճարեցինք: Եւ քանի որ այդպիսի ցաւոտ իրողութիւնները կրնան կրկնուիլ, որովհետեւ մենք կը ճանչնանք մեր դիմաց կանգնածը, անհրաժեշտ է ոտքի կանգնիլ եւ նոր թափով շարժիլ յառաջ: Առաւել եւս մեր հակառակորդը իր գործողութիւններով կը նպաստէ մեր այդ հաւաքական անվտանգային խնդիրներու անյապաղ իրականացման», ըսաւ Զոչարեան:

Ըստ անոր՝ իւրաքանչիւր պէտք է հասկնայ, որ հայրենասիրութիւնը կը սկսի ազգային գոյներէն, համերէն, փոխադարձ սէրէն, ուրիշի կրօնատէրի եւ ցաւին նկատմամբ կարեկցանքէն, արդար ու ազնիւ ձգտումներէ:



«Պատերազմով փառքով ինկածները մեզ հայրենասիրութիւն ու իրական արժեքներ սորվեցուցին, ամուր հող ստեղծեցին մեր հայրենիքի հեռանկարային ապագան կերտելու համար: Այս պատերազմէն յետոյ Եռաբլուրի մէջ թաղուած մեր երկրի պահապան իրեշտակներուն քանակը աւելցաւ: Եռաբլուրի մէջ թաղուածները ո՛րք է մէկուն սեփականութիւնը չէն, բոլորին են, այնտեղ մեր գաւազներն են, մեր բանակի եւ մեր պետականութեան զինուորները: Մեր դարպասները կը սկսին սահմանէն եւ Եռաբլուրէն, անոր համար ո՛րք է մէկուն առջեւ պէտք չէ փակուիլ Եռաբլուրի դռները: Այդ պատճառով իւրաքանչիւրս պարտք ունինք Եռաբլուրին վերադարձնելու՝ հայրենիքը լուռ սիրել մտքով, հոգիով, գործով, առանց բառերու, գուրկ դատարկ փոսքեր է յուզականութեան», ըսաւ Զոչարեան եւ յաւելեց, որ հայրենիքին համար անհրաժեշտ է անխոնջ աշխատիլ, ստեղծել եւ արարել:

«ՀԱՄԱՅՈՒՅՄԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՑՈՒՑԻՉԸ, ՈՐՈՆՔ ՑՈՅՑ ԿՈՒՏԱՆ ՄԵՐ ՄԻԱԿԱՄՈՒԹԻՒՆԸ» Կ'ԸՍԵ ԲՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ԲՀ վարչապետի աշխատակազմի ղեկավար, Համահայկական ամառային ութերորդ խաղերով կազմակերպման եւ կայացման կազմակերպչական կոմիտէի նախագահ Արայիկ Յարութիւնեան մասնակցած է Համահայկական խաղերու համաշխարհային կոմիտէի գործադիր կոմիտէի նիստին:



Հանդիպման ընթացքին քննարկուած են համահայկական ամառային ութերորդ խաղերու կայացման եւ կազմակերպչական աշխատանքներու հետ կապուած հարցեր:

Վարչապետի աշխատակազմի ղեկավարը նաեւ խօսած է մարզական ենթակառուցումներու արդիականացման ուղղութեամբ կատարուած աշխատանքներու մասին եւ ընդգծած:

«Մենք յաջորդ խաղերուն շատ աւելի լաւ մարզադաշտեր, մարզադահլիճներ պիտի ունենանք: Կառավարութիւնը բաւականին մեծ ներդրում կատարած է մարզական ենթակառուցումներուն մէջ: Մարզահամերգային համալիրը այս պահուն քանի մը դաշիւններով եւ ենթակառուցումներով արդէն կրնայ բազմաթիւ մրցումներ ընդունիլ եւ յաջորդ ամառ մենք աշխուժօրէն պիտի ներգրաւենք մարզահամերգային համալիրը: Այլ դաշիւններ, որոնք նախապէս ներգրաւուած եղած են, տոյսպէս խաղերու ժամանակ պիտի օգտագործուին»:

Վարչապետի աշխատակազմի ղեկավարը անդրադարձած է Երեւանի մէջ այս տարի տեղի ունեցած Բռնցքամարտի Եւրոպայի պիտիւններէն: Արայիկ Յարութիւնեանը նշած է, որ յաջորդ տարի՝ 15-23 Ապրիլին, Երեւանի մէջ պիտի կայանայ Ճանապարհի Եւրոպայի պիտիւնները:

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ «ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԸ ԶԱՏՈՎ ՀԱՄԵՐԳՈՎ ՊԻՏԻ ՆՇԷ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՎԱՆՃԱՆՄԱՆ 850-ԱՄԵԱԿԸ

Երկուշաբթի, 3 Յուլի 2022-ի երեկոյան, Պիքֆայի Սուրբ Աստուածածին վանքի վեհարանէն ներս, Ն.Ս. Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Յայրապետը ընդունեց Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբի նորընտիր վարչութիւնը, գլխավորութեամբ երգչախումբի խմբավար Յոզ. Տ. Չաւէն Կրդ. Նաճարեանի:



Յանուն երգչախումբին, հայր սուրբը որդիական երախտագիտութիւն յայտնեց Վեհափառ Յայրապետին, երգչախումբի գործունէութեան նկատմամբ իր ցուցաբերած հայրական հոգածութեան ու զօրակցութեան համար: Այս առիթով, խմբավար հայր սուրբը Նորին Ս. Օծուխեան պարզեց երգչախումբին յառաջիկայ ծրագիրները եւ այս ծիրէն ներս ընդգծեց Ս. Ներսէս Շնորհալի Յայրապետին վախճանման 850-ամեակին նուիրուած յատուկ համերգը, որ պիտի կայանայ Անթիլիասի Մայրավանքին մէջ: Յայր սուրբը նաեւ յիշեց, որ յառաջիկայ տարի երգչախումբին հաստատման 50-ամեակն է եւ պարզեց այս առիթով կատարուելիք կարգ մը նախաձեռնութիւններ:

Վեհափառ Յայրապետը իր շքեմ գնահատանքը յայտնեց խմբավար հայր սուրբին, վարչութեան, ինչպէս նաեւ երգչախումբի բոլոր անդամներուն, որոնք յատկապէս Լիբանանի ընկերային-տնտեսական դժուար պայմաններուն մէջ կը շարունակեն իրենց գործն մասնակցութիւնը բերել երգչախումբի ծրագիրներու իրագործման: Նորին Ս. Օծուխեանը նաեւ ընդգծեց մեր հոգեւոր ու մշակութային երաժշտական արժեքները տարածելու կոչուած երգչախումբին առաքելութեան կարեւորութիւնը:

## ՄԵԿԱՐԿԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՄԵՋ ԲԱՐԵՎԱՐԵՈՒԹԵԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԵՒ ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԿԱՆԽԱՐԳԻՄԱՆ ԵՄ ԹՈՒՆԻՆԿ ԾՐԱԳԻՐԸ

Արդարադատութեան նախարարութեան գլխավոր քարտուղարի տեղակալ Նուարդ Վարդանեանը մասնակցած է «Բարեկարգութեան խթանում եւ փտածութեան կանխարգիլում Յայաստանի պետական ոլորտին մէջ» ԵՄ Թուրքիայի Թուրքիայի պաշտօնակալ քաջման նուիրուած միջոցառման:



Նուարդ Վարդանեանը բացման խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնած է միջոցառման մասնակիցներուն, գործընկերներուն, Յայաստանու մէջ ԵՄ պատուիրակութեան ներկայացուցիչներուն՝ արդիւնաւետ համագործակցութիւն ծաւալելու, ինչպէս նաեւ փտածութեան դէմ պայքարի ոլորտին մէջ իրականացուող ծրագիրներուն շարունակական աջակցութիւն ցուցաբերելու համար:

Վարդանեանը ներկայացուցած է նաեւ Արդարադատութեան նախարարութեան կողմէ փտածութեան դէմ պայքարի ոլորտին մէջ իրականացուող աշխատանքները:

Նուարդ Վարդանեանը կարեւորած է նաեւ Եւրոպայի միութեան անդամ երկիրներու՝ մասնաւորապէս Գերմանիոյ եւ Լաթվիայի Յանրապետութեան միջեւ փտածութեան դէմ պայքարի ոլորտին մէջ համագործակցութեան շարունակականութիւնը, որ մեծապէս պիտի նպաստէ փտածութեան կանխարգիլման մեխանիզմներու արդիւնաւետութեան բարձրացման եւ Յայաստանի մէջ հակափտածութիւն հաստատութեան համակարգի ամրապնդման:

Միջոցառման մասնակցած են պետական կառավարման մարմիններու, Յայաստանի մէջ դիւանագիտական եւ միջազգային առաքելութիւն իրականացնող կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

## ԿՈՄԻՏԱՍԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՄԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՂԱԾ Ե ԳԵՐՄԱՆԻՅՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՒ ԴԻՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՄԱՆ 30-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒՄԸ ՀԱՄԵՐԳ

Կոմիտասի թանգարան-հիմնարկին մէջ տեղի ունեցած է Գերմանիոյ եւ Յայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին նուիրուած համերգ, որուն ընթացքին ելոյթ ունեցած են Անի Եորեցը (սովորանօ) եւ Մաթիաս Սամուիլը (ղաշնամուր):

Համերգը տեղի ունեցած է «Կոմիտաս» միջազգային գիտաժողով-փառատօնի ծիրին մէջ:

Յայաստանի մէջ Գերմանիոյ դեսպան Վիքթոր Ռիխթըր նշած է, որ իր համար առանձնապատուկ պատիւ է 3 Յուլիտեմբերին՝ Գերմանիոյ միասնութեան օրը, Կոմիտասի թանգարան-հիմնարկին մէջ ներկայ գտնուած երկու երկիրներուն միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին նուիրուած համերգին:



«Մեծապէս շնորհակալ եմ Կոմիտասի թանգարանին՝ այս միջոցառումը մեր երկու երկիրներուն համար այդքան խորհրդանշական վայրի մէջ կայացնելու համար: Յայ երաժշտահան Սողոմոն Սողոմոնեանի կեանքը մեր երկու ժողովուրդներու տեսական մշակութային կապերու վկայութիւնն է: Ան ուսանած է աշխատած է Պերլինի մէջ եւ 19-րդ դարու վերջաւորութեան՝ Նախքան վերադարձը Օսմանեան կայսրութիւն, ան հիմնադիր անդամ եղած է Միջազգային երաժշտական միութեան: Անոր երաժշտութիւնը կը միաւորէ մեր երկիրներն ու ժողովուրդները»:

Դեսպանը երկրորդ յարաբերութիւններուն մէջ շրջադարձային համարած է Գերմանիոյ Պունտեթակի կողմէ Յայոց ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւի ընդունումը 2016 թուականի Յունիս 2-ին, որով Գերմանիան նշանակալի նպաստ բերաւ Յայոց ցեղասպանութեան ճանաչման միջազգային գործընթացին եւ մարդկութեան դէմ:

Ողջունելով հիւրերը՝ Կոմիտասի թանգարան-հիմնարկի տնօրէն Նիքոլայ Կոստանդեանը նշած է, որ Գերմանիան եւ Գերմանական մշակոյթը Կոմիտասի կեանքին մէջ առանձնապատուկ նշանակութիւն ունին:

Շնորհաւորելով դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 30-ամեակին եւ Միասնութեան օրուան առթիւ, ԿԳՄՄ նախարարի տեղակալ Արա Խզմալեան շեշտած է, որ Յայաստանի Յանրապետութիւնը այսօր բարդ եւ բեկումնային ժամանակաշրջանի մէջ կ'ապրի:

«Դժուար է գտնել մէկ այլ երկիր, որ կրնայ պատմական աղետներու եւ փլուզումներու յաղթահարման օրինակ ըլլալ, ինչպէս Գերմանիան է: Շնորհիւ անցեալի փառահեղ փիլիսոփայական միտքի եւ գեղարուեստական մշակոյթի բացառիկ հենքի՝ Գերմանիան կրցած է յաղթահարել պատմական փակուղիները եւ պատմական որոշումներու հետեւանքները, հաստատել քաղաքացիական արժեքները, հանրային համակեցութեան կանոնները, մարդու ազատութիւնն ու իրաւունքները»:

ԿԳՄՄ փոխնախարարը մկտահութիւն յայտնած է, որ Գերմանիան իր խօսքը ունի ըսելու աշխարհաքաղաքական ցնցումներու այս ծիրին մէջ, եւ հայ-գերմանական երկարամեայ բարեկամութիւնը պիտի շարունակէ ամրապնդուիլ՝ ի նպաստ մեր ժողովուրդներու բարօրութեան:

Կամերային երաժշտութեան երեկոյի ընթացքին հնչած են Կոմիտասի, Պրամզի, Ռախմանինովի, Չիլէայի, Շթրաուսի, Տվորժաքի եւ Զալմանի ստեղծագործութիւնները:

**ՀԱՃՆՈՅ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 102-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻ ՄԱՏԱՂԻ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ**

Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած անանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 15 Յուլիտեմբեր 2022-ին:

Հետեւաբար կ'ը կ'ուղղեց բոլոր հայրենակիցներուն, որ իրենց մատաղցու ոչխարը կամ նուիրատուութիւնները փոխանցեն Հաճնոյ Յայրենակցական գրասենեակ, Սբ. Գեորգ եկեղեցոյ խորհրդատուն եւ կամ շրջող հանգանակիչներուն:

**Հաճնոյ Յայրենակցական Միութեան Վարչութիւն**

**BOGHOS OPTIC**

Autoroute Jdeideh, Tel.: 01-870016

## ԵՐԿԼԵՉՈՒ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԱԿՆՈՅԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՓՈՐՁԱՇՐՋԱՆ ՊԻՏԻ ԱՆՑԸՆԵՆ ՓԱՐԻՉԻ ՄԵՋ

Երկլեզու դրամատիկական արուեստանոցը Յայաստանի մէջ ապրող եւ ստեղծագործող արուեստագետներուն հնարաւորութիւն պիտի տայ սորվելու ֆրանսերէն, ծանօթանալու ֆրանսացի եւ սփիւռքահայ արուեստագետներու աշխատանքային մեթոտաբանութեան, թատրոնի եւ ֆիլմի անանդոյններուն:



Արուեստանոցի երկրորդ շրջանը, որ տեղի կ'ունենայ Երեւանի եւ Կիւմրիի մէջ, մեկնարկած է 2 Յուլիտեմբերին եւ պիտի տեւ մինչեւ Ապրիլ 2023:

Ապրիլին յայտարարուած ընդունելութեան առաջադրուած է 62 թեկնածու: Նախընտրական երկու փուլերուն ընտրուած է 30 մասնակից՝ արհեստավար եւ նորաւարտ արուեստագետներ, որոնցմէ 20-ը Երեւանի, իսկ 10-ը՝ Կիւմրիի մէջ:

Նախագիծի ղեկավար դերասան, բեմադրիչ, արտադրող Սերժ Աւետիքեան ընդգծեց, որ կը փափաքի, որ հայ երիտասարդները ֆրանսերէն սորվին: «Այդ հարցով մեզ շատ կ'օգնէ SPFA ընկերութիւնը, որ նախագիծի մասնակիցներուն մասնագիտական դասերը սկսելէ չորս ամիս առաջ անոնց համար ֆրանսերէնի դասընթացքներ կը կազմակերպէ: Երբ մասնակիցները կու գան արուեստագետներու հետ աշխատելու, արդէն ֆրանսերէն կրնան հասկնալ, կարդալ», նշեց Աւետիքեանը՝ շեշտելով, որ ֆրանսերէնը արուեստանոցի սիրտն է:

Աւետիքեանը տեղեկացուց, որ Յուլիտեմբերին եւ յաջորդ տարուան Ապրիլին հայ երիտասարդ արուեստագետներու հետ աշխատելու համար Յայաստան պիտի ժամանէ 11 արուեստագետ: Իւրաքանչիւր պիտի աշխատաւի մէկ շաբաթ Երեւանի եւ մէկ շաբաթ Կիւմրիի մէջ:

Դասընթացքներու աւարտին ներկայացում պիտի բեմադրէ Պելլիքայեան իրաւիւրուած բեմադրիչ Միշէլ Պերնարը: Բեմադրութիւնը կը նախատեսուի ներկայացնել Ֆրանսայի եւ Պելլիքայի մէջ, իսկ այն ուսանողները, որոնք առանձնակի յաջողութիւններ պիտի արձանագրեն մասնագիտական եւ ֆրանսերէնի ուսուցման հարցով, նախագիծի աւարտին հնարաւորութիւն պիտի ունենան փորձաշրջան անցնելու Փարիզի JLB պատիւոյն մէջ:

Յայաստանի մէջ Ֆրանսայի դեսպանատան մշակութային եւ համագործակցութեան գործերով կցորդ է Յայաստանի ֆրանսական հիմնարկի տնօրէն Կիյոմ Նարժուլէն վատահեցուց, որ նախագիծը ունի ապագայ: Անոր խօսքով՝ Ֆրանսայի դեսպանատունը աջակցած է ծրագրին, քանի որ մշակոյթն ու դրամատիկական արուեստը շատ կարեւոր են երիտասարդներու, հասարակութեան համար: Նարժուլէի համոզմամբ՝ մշակոյթը կ'օգնէ հասարակութեան նոյնիսկ ամենաղծուարին ու ծանր պահերուն, կ'օգնէ մարդուն մտածել լաւ ու բարի գործերու մասին:

**«ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԵՋ ԱՅՂ ՇԱՏ ՊԱՇԱՆՉՈՒՄ ՈՒ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ Է»**

(Շարունակուած Ա. Էջէն)

«Ի շարունակութիւն Արցախի Յանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեանի վերջին յայտարարութեան՝ Ռուբէն Վարդանեանը պետական նախարար նշանակելու առաջարկին վերաբերեալ՝ կ'ուզէ քանի մը շեշտարում ընել:

Կը կարծեմ, որ այս իրավիճակին մէջ այդ շատ պահանջը չի ունենար որոշում է, եւ ես անվերապահօրէն կ'աջակցիմ նախագահի որոշում-առաջարկին:

Ռուբէն Վարդանեանի նման համաշխարհային մակարդակի ռազմավարական կառավարիչը եւ բարձր արժեքներու տեր մարդը մեծ հնարաւորութիւն է որեւէ պտուտութեան, առաւել եւս՝ խոր ճգնաժամ ապրող Արցախի Յանրապետութեան համար: Ուստի, Արցախ տեղափոխուելու անոր որոշումը լաւագոյն առիթն է անոր ներուժն ու առաքելութեան գիտակցումը արդիւնաւետօրէն իրացնելու համար, որուն ներկայիս լաւագոյն մեխանիզմը, իմ պատկերացմամբ նոյնպէս, լայն լիազօրութիւններով պետական նախարարի պաշտօն զբաղեցնելն է:

Նշեմ, որ իմ ու պարուն Վարդանեանի գնահատականները Արցախի ներկայի ու ապագայի վերաբերեալ, հիմնախնդիրներու լուծման մօտեցումները մեծապէս կը համընկնին, եւ նաեւ այդ պատճառով եւս կը հաւատամ, որ ան կրնայ զգալի յառաջընթաց ապահովել եւ ներքին, եւ արտաքին ուղղութիւններուն մէջ:

Իսկ իմ նախընթաց գործունէութեան գնահատականներուն եւ հետագայ ընելիքներուն վերաբերեալ դեռ առիթ կ'ունենամ հանգամանակից խօսելու: Ես կը շարունակեմ ու պիտի շարունակեմ ծառայութիւնս Յայրենիքիս իմ ամբողջական ներուժով, արժեքներով ու սկզբունքներով հանդերձ, եւ որեւէ դիրքի ու հանգամանքի մէջ կը մնամ շարքային զինուոր՝ յանուն հայոց պետականութեան եւ ազգային վերելքին», նշուած է Արտակ Բեկլարեանի գրառման մէջ:



**ԱՍԻՈՑ ՄԻՆՉՅԵՒ 17 ՏԱՐԵՎԱՆ ԲԱԺԱԿԻ 2-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ԼԻԲԱՆԱՆ ԶԻՋԵՑԱՒ ՕՍԱՆԻՆ**

Ասիոյ մինչեւ 17 տարեկան տղոց ֆուտբոլի բաժնի գտնուած մրցումներուն, խմբակին առաջին դիրքը գրաւող խումբը կը հասնի աւարտական մրցաշարը, իսկ երկրորդ դիրքը գրաւող խումբը յոյսը կը պահէ հասնելու համար: Ստորեւ տեսնել 2-րդ հանգրուանին արձանագրուած արդիւնքները.

- Ա. խմբակ.** - Ֆիլիպին - Ճափոն 0-3
- Թիւրքմէնիստան - Սուրիա 1-1
- Դասաւորում.** 1) Թիւրքմէնիստան 2 մ 4 կետ 3-1, 2) Ճափոն 1 մ 3 կետ 3-0, 3) Սուրիա 2 մ 2 կետ 1-1
- Բ. խմբակ.** - Արաբ. Միաց. Էմիր. - Պաղեստին 4-3
- Կոււա՝ - Ինտոնէզիա 0-14
- Դասաւորում.** 1) Արաբ. Միաց. Էմիր. 2 մ 6 կետ 13-3, 2) Ինտոնէզիա 1 մ 3 կետ 14-0, 3) Մալեզիա 1 մ 3 կետ 4-0
- Գ. խմբակ.** - Լիբանան - Օման 1-2
- Պահրէյն - Զաթար 1-1
- Դասաւորում.** 1) Զաթար 2 մ 4 կետ 3-2, 2) Պահրէյն 2 մ 4 կետ 2-1, 3) Օման 1 մ 3 կետ 2-1, 4) Իրաք 1 մ 0 կետ 1-2, 5) Լիբանան 2 մ 0 կետ 1-3
- Դ. խմբակ.** - Զուբէյ - Միանմար 1-0
- Մալտիվ - Յնդկաստան 0-5
- Դասաւորում.** 1) Զուբէյ 2 մ 6 կետ 7-0, 2) Մեւու. Արաբ. Իմ 1 մ 3 կետ 6-0, 3) Յնդկաստան 1 մ 3 կետ 5-0

**ԱՆՂԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ԼԵՅՍԱԹԵՐ ՄԻԹԻ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԱՆԱԿԸ**

Անգլիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 9-րդ հանգրուանի վերջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Լեյսթըր Սիթի - Նորթհեմպտըր 4-0
- 20-րդ դիրքը գրաւող «Լեյսթըր Սիթի»-ն իր դաշտին վրայ յաղթեց 19-րդ դիրքը գրաւող «Նորթհեմպտըր»-ին եւ 4 կետով գրաւեց 19-րդ դիրքը: «Վոլվըրհեմպթըրն Ուոտսոըրը» 6 կետով 18-րդ է:

Ստորեւ տեսնել 19-րդ դիրքը գրաւող «Վոլվըրհեմպթըրն Ուոտսոըրը» 6 կետով 18-րդ է:

**ՍՊԱՆԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 7-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ՌԱՅՈ ՎԱԼԵՔԱՆՕ ՅԱՂԱԿԱՆ**

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 7-րդ հանգրուանի վերջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Ռայօ Վալեքանօ - Էլչէ 2-1
- 12-րդ դիրքը գրաւող Մատրիսի «Ռայօ Վալեքանօ»-ն իր դաշտին վրայ յաղթեց 20-րդ դիրքը գրաւող «Էլչէ»-ին եւ 10 կետով գրաւեց 10-րդ դիրքը: «Ալմերիա» 4 կետով 18-րդ է, «Զատիգ» 4 կետով՝ 19-րդ:

**ԻՏԱԼԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 8-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ՈՒՏԻՆԵԶԷ՝ 3-ՐԴ**

Իտալիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 8-րդ հանգրուանի վերջին մրցումին արձանագրուեցաւ հետեւեալ արդիւնքը.

- Վերոնա - Ուոտինգէ 1-2
- 4-րդ դիրքը գրաւող «Ուոտինգէ»-ն իր դաշտէն դուրս մըրցեցաւ 17-րդ դիրքը գրաւող «Վերոնա»-ի դէմ եւ արձանագրեց իր 6-րդ յաղթանակը ու գրաւեց 3-րդ դիրքը, մէկ կետ հեռու առաջատար «Նափոլի»-էն: Մրցումի 23-րդ վայրկեանին, սկզբնական փուլէն հետոյ Յոյս յառաջ տարաւ «Վերոնա»: Սակայն փոխարինող փորձուկացի յարձակող Պեթթօ՝ 70-րդ եւ սլովէն կիսապաշտպան Պիոլո՝ 90+3-րդ վայրկեաններուն հաշիւը դարձուցին 1-2, սպանացի ՏեյլընՖեօյի եւ գերմանացի Սամարիթիի փոխանցումներով:
- Դասաւորում.** 1) Նափոլի 20 կետ 18-6, 2) Աթալանթա 20 կետ 12-3, 3) Ուոտինգէ 19 կետ 17-8, 4) Լազիօ 17 կետ 17-5, 7) Եուվենթիս 13 կետ 12-5, 9) Ինթեր Միլան 12 կետ 14-13

**ՌՈՍԻՈՑ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 11-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ՌՈՍՏՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ**

Ռուսիոյ ֆուտբոլի ախոյեանութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Չենիթ Ս. Փեթեր. - Ռոստով 3-1
- Խիմքի Մոսկուա - ԲԿՄՄ Մոսկուա 1-2
- Կրիլիա Սովետով Սամարա - Զրասնատար 0-0
- Նիժնի Նովորոտ - Սպարտակ Մոսկուա 1-2
- Կրոզնի - Տիւրքմէնիստան 2-1
- Օրենպուրկ - Սոչի 4-1
- Այս հանգրուանին, առաջատար Սենթ Փեթերպուրկի «Չենիթ»-ը իր դաշտին վրայ մըրցեցաւ 2-րդ դիրքը գրաւող «Ռոստով»-ի դէմ եւ արձանագրեց իր 9-րդ յաղթանակը, «Ռոստով» կրեց իր առաջին պարտութիւնը եւ նահանջեց 3-րդ դիրքը: Պայրամեան «Ռոստով»-ի հիմնական կազմին մէջն էր եւ փոխարինուեցաւ 60-րդ վայրկեանին: Պրագիլի յարձակող Մալքով՝ 14-րդ, պրագիլի կիսապաշտպան Վենտրով՝ 65-րդ եւ փոխարինող կիսապաշտպան Զուպիլա՝ 77-րդ վայրկեաններուն նշանակեցին «Չենիթ»-ի կողմը, Զլաուսիինի, Սերկեյի եւ Մալքովի փոխանցումներով: 47-րդ վայրկեանին, յարձակող Զամիլիչենքո նշանակեց «Ռոստով»-ի կողմը, Սիլվանովի փոխանցումով: Յայաստանի հաւաքականի յարձակող Ետուարտ Սփերցեանի մաս կազմած 4-րդ դիրքը գրաւող «Զրասնատար»-ը իր դաշտէն դուրս մըրցեցաւ 11-րդ դիրքը գրաւող Սամարայի «Կրիլիա Սովետով»-ին դէմ եւ մըրցումը աւարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ: Ետուարտ Սփերցեան մասնակցեցաւ ամբողջ մրցումին: Խումբը նահանջեց 5-րդ դիրքը:


**ԴԱՍԱՎՈՐՈՒՄ. 1) ՉԵՆԻԹ 29 կետ 32-4, 2) ԲԿՄՄ 23 կետ 23-10, 3) Ռոստով 22 կետ 20-15, 4) Սպարտակ 22 կետ 24-12, 5) Զրասնատար 21 կետ 21-14: ՌԻՔԱՐԿՈՒՆԵՐ. 1) Զ. Փրովէ-Սպարտակ 8 կոլ, 2) Ե. Նուպու-Սոչի 8 կոլ, 3) Ե. Սփերցեան-Զրասնատար 8 կոլ**

**ՖՐԱՆՍԱԿԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 9-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ՓԱՐԻ ՄԵՆ ԺԵՐՄԵՆ, ՄԱՐՍԵՅ ԵՒ ԼԱՆՍ ՅԱՂԹԵՑԻՆ**

Ֆրանսայի ֆուտբոլի ախոյեանութեան 9-րդ հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները.

- Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ - Նիս 2-1
- Անժե - Օլիմպիք Մարսէյ 0-3
- Լորիան - Լիլ 2-1
- Լանս - Օլիմպիք Լիոն 1-0
- Սթրասպուրկ - Ռեն 1-3
- Մոնպեր - Լանս 4-1
- Օքսէր - Պրետս 1-1

Այս հանգրուանի մրցումներու ծիրին մէջ, առաջատար «Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ»-ը իր դաշտին վրայ մըրցեցաւ 13-րդ դիրքը գրաւող «Նիս»-ի դէմ եւ տարաւ իր 8-րդ յաղթանակը: Մրցումի 29-րդ վայրկեանին, արժանաբար յարձակող Լիոնէլ Մեսսի յառաջ տարաւ «Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ»-ը: 47-րդ վայրկեանին յարձակող Լապորտ հաշիւը դարձուց 1-1: Իսկ 83-րդ վայրկեանին, փոխարինող յարձակող Մապափե նշանակեց «Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ»-ի յաղթանակի կոլը.



Մուքիելի փոխանցումով: 4-րդ դիրքը գրաւող «Լանս» իր դաշտին վրայ մըրցեցաւ 7-րդ դիրքը գրաւող «Օլիմպիք Լիոն»-ի դէմ եւ յաղթեց միակ կոլով: յարձակող Սթրասպուրկ տուգանային հարուածով նշանակեց կոլը 82-րդ վայրկեանին: Իսկ Միշէլ Տեր Չաքարեանի մարզած՝ 19-րդ դիրքը գրաւող «Պրետս»-ը կրցաւ իր դաշտէն դուրս հաւասարիլ 14-րդ դիրքը գրաւող «Օքսէր»-ի հետ ու բարձրացաւ 18-րդ դիրքը:

**ԴԱՍԱՎՈՐՈՒՄ. 1) Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ 25 կետ 28-5, 2) Մարսէյ 23 կետ 19-5, 3) Լորիան 22 կետ 19-13, 4) Լանս 21 կետ 17-7, 18) Պրետս 6 կետ 9-19**

**ՖՈՒՑԱՆ ԱՍԻՈՑ ԲԱԺԱԿ ԼԻԲԱՆԱՆ ԶՐԱԺԵՇՏ ՏՈՒՄ**

Զուբէյի մէջ տեղի ունեցած ֆուտբոլի Ասիոյ բաժնի գտնուած մրցումներուն Լիբանանի հաւաքականը արձանագրեց հետեւեալ արդիւնքները.

- Լիբանան - Թայլան 1-1
- Լիբանան - Ինտոնէզիա 2-7
- Լիբանան - Իրան 0-9

Փորթուգալացի մարզիչ Շտայօ Ալմէյտայի ղեկավարութեամբ Լիբանանի հաւաքականը չկրցաւ յաղթանակ պահովել եւ դուրս մնաց մրցաշարէն:

**ԱՅՍՕՐՈՒՄԸ ՄՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐ**

- ՉԵՄՓԵՆՆԵՆ ԼԻԿԻ ԽՐԱԿԱՆԵՐՈՒ 3-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ**
- 19:45 Ալաշքարկ (3) - Տիւրքմէն 2ակրէպ (2)
- 19:45 ՌԴ Լայպիցի (4) - Սելթիք (3)
- 22:00 Չելսի (4) - ԱՍ Միլան (1)
- 22:00 Ռեալ Մատրիս (1) - Շախտիոր Տնեցք (2)
- 22:00 Մանչէսթըր Սիթի (1) - ՖԱ Զոփենհալքն (3)
- 22:00 Սեփիա (4) - Պրոպրիա Տրոպիս (2)
- 22:00 Եուվենթիս (3) - Մաքապի Գ. (4)
- 22:00 Պենֆիլդ (2) - Փարի ՄԵՆ ԺԵՐՄԵՆ (1)
- ԱՍԻՈՑ ՖԵՏԵՐԱՍԻՈՒՆԻ ԲԱԺԱԿԻ ՇՐՋ. ԱՄՐԱՍԿԱՆ**
- 16:00 Սոկոտիան (193) - Զուլալա Լամիուր Սիթի (165)
- ԵՐՈՒՊԱՅԻ ՄԻՆՉՅԵՒ 19 ՏԱՐԵՎԱՆ ԿԻՆԵՐՈՒ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ Ա. ՉԱՆՈՒՄԸ**
- 13:00 Ռումանիա (40) - Յայաստան (139)
- ԶԱՅՍՏԱՆԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ԱՄՐԱՍԿԱՆ**
- 14:00 Միքա Երեւան (Բ.6) - Գանձասար Կապան (Բ.5)
- 14:00 Ունեթ Արմենիա (Բ.1) - Ալաշքերտ (Ա.)
- 14:00 Սիւնիք (Բ.10) - Շիրակ Կիւմրի (Ա.)

**ԱՄՆ-Ի ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 33-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ ՊՐԱԳՐԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ**

- 02:00 Շարլոթ (9) - Զոլոպուս Զրու (8)
- ՊՐԱԳՐԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ**
- 01:00 Աթլէթիքո Կոյնսէնս (19) - Ֆլիմինկս (3)
- 01:30 Աթլէթիքո Փարսենս (6) - Ֆորթալեգա (9)
- 03:30 Ֆլամինկո (5) - Ինթերնասիոնալ (2)
- ԱՐՄԵՆԻԱԻ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ Բ. ՓՈՒԼԻ 23-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ**
- 22:30 Զոլոն Սանթա Ֆե (25) - Փաթրոնաթ (11)
- 01:00 Աթլէթիքո Թուրքուման (2) - Փլաթենս (12)
- 03:30 Ռիվըր Փլէյթ (6) - Եսթիլտիանթս (19)
- ԱՍԻՈՑ ՄԻՆՉՅԵՒ 17 ՏԱՐԵՎԱՆ ԱՆՈՅՆԱՆՈՒԹԵԱՆ 3-ՐԴ ՉԱՆՈՒՄԸ**
- 11:30 Աւստրալիա (39) - Յիւս. Մարիան (208)
- 12:00 Իրան (22) - Լաօս (183)
- 13:00 Եմէն (153) - Պիտան (186)
- 14:00 Յար.Զորեա (28) - Սիլ Լաքա (207)
- 16:00 Պրունայ (190) - Իւզպէքիստան (77)
- 16:00 Ինտոնէզիա (2) - Արաբ. Միաց. Էմիր. (1)
- 16:00 Օման (3) - Պահրէյն (2)
- 18:15 Մեւու. Արաբիա (2) - Մալտիվ (5)
- 19:45 Իրաք (4) - Լիբանան (5)
- 21:00 Յորդանան (4) - Ֆիլիպին (5)
- 21:30 Յնդկաստան (3) - Զուբէյ (1)

**ՊԱՔԵԹՊՈՒԼԻ ԵՆ.ՊԻ.ԷՅ.-Ի ԱՆՈՅՆԱՆՈՒԹԻՆ**  
02:30 Պոսթըն Սելթիքս (1) - Թորոնթօ Ռեփթըր (3)  
05:00 ԼԱ Լեյքըր (7) - Ֆինիքս Սանզ (2)  
**ԹԵԼԻՍԻ ՕՍԹՐԱԿԱՅԻ ԿԻՆԵՐՈՒ ՄՐՅԱԸ. 1/16-ՐԴ ԱՄՐԱՍԿԱՆ**  
12:00-Են սկսեալ, «eurosport» կայանէն  
**ԹԵԼԻՍԻ ՆՈՐ ՍՈՒԹԱՆԻ ՄՐՅԱԸ. 1/16-ՐԴ ԱՄՐԱՍԿԱՆ**  
08:00-Են սկսեալ, «beinsports» կայանէն  
**ԴԵՑԵՆԱՐԸԱՐ**  
05:00 Tour de Taiwan շրջավազը, «eurosport» կայանէն



**ՄԵՐ ԵՐԹԸ ԸՆԴՈՒՆԱԿԵՆՔ ՄԻԱՍԻՆ**

Այս տարի կը լրանայ «Արարատ» օրաթերթի հիմնադրութեան 85-ամեակը: Արարատ սրբազան լէրան անունը կրող մեր օրաթերթը իր հիմնադրութենէն ի վեր մամուլի ճամբով ծառայած է հայ ազգին, մանաւանդ Սփիւռքի մէջ, ուր մամուլը կը հանդիսանայ հայապահպանութեան գործակալներէ մին: Այս 85 տարիներուն ընթացքին «Արարատ» օրաթերթը, ի հեռուէս ակամայ կարճ խափանումներուն, լոյսի բարիքին եկած է շնորհիւ իր 5 հիմնասիւններուն,

- ա) իր կնքահայրը հանդիսացող ՍԴԿԿ-ին,
- բ) իր նուիրեալ ու ժրջան խմբագիրներուն եւ անձնակազմի անդամներուն,
- գ) իր կոչումին հաւատացող յօդուածագիրներուն եւ աշխատակիցներուն,
- դ) իր հաւատարիմ ընթերցողներուն,
- ե) իր առաքելութեան շարունակութիւնը երաշխաւորելու համար իրենց լուծման նուիրած հաւատաւոր հայորդիներու:

Այս առիթով մենք շնորհակալութիւն կը յայտնեց այս հինգ հիմնասիւնները հանդիսացող իւրաքանչիւրին, անհատ առ անհատ: Այս հինգին միջեւ յաջող փոխկապակցութեան շնորհիւ է որ «Արարատ» օրաթերթը 85 տարիներէ ի վեր կը շարունակէ իր լրատուական աշխատանքը, կը շարունակէ իր բաժնի պարտականութիւնը կատարել Սփիւռքի մէջ հայապահպանման աշխատանքը անխաթար պահելու ուղիով մէջ:

Մենք վստահ ենք, որ բոլոր վերոնշեալներուն բարի կամեցողութեան եւ վճռակամութեան շնորհիւ ծերունագրող տարիքի հասած, սակայն ընդմիջտ երիտասարդ ու աշխույժ «Արարատ» օրաթերթը պիտի շարունակէ ընթանալ 85 տարիէ ի վեր իր ակօսած ճամբէն, տեղեկատուութեան լոյսը սփռելով աշխարհի չորս ծագներու գտնուող հայերուն:

Տասնամեակներ շարունակ հայ ժողովուրդի առօրեային ընկերակից դարձած օրաթերթը, որ շրջանցած է գանազան վերիվայրումներ, այժմ կը դիմագրաւէ Լիբանանի ներկայի աննախադէպ եւ տնտեսապէս ճակատագրական պայմանները, ու իր բոլոր ուժերով կը ձգտի յաղթահարելու բազմաթիւ դժուարութիւնները, իր լրատուական եւ լրագրական ազգային գոյերթը ամենայն պատասխանատուութեամբ պահպանելով:

Արդարեւ, ինչպէս եւ միշտ գտնուած են մամուլի առաքելութեան հաւատացողներ, մամուլի երթը անխափան պահելու համար իրենց սուղն ու աժանը տրամադրողներ, մամուլին նիւթապէս աջակցած նուիրական հայորդիներ, վստահ ենք, որ այսօր ես կան այդպիսի պատուական մարդիկ, որոնք պատրաստ են իրենց լուծման ներդրելու յանուն «Արարատ» օրաթերթի գործունեութեան յարատեւութեան:

Ուստի, իրենց նիւթական աջակցութեամբ հանդէս գալ փափաքողներէն կը խնդրենք կապ հաստատել օրաթերթի տնօրէնութեան հետ ե-նամակով՝ aradoratert@gmail.com, կամ գանազահարելով +961-3-542782 թիւին:

**Կանխայայտ շնորհակալութիւն:**

Մեր երթը պիտի շարունակենք միասին:

**info ARARAD 85**

Սիրելի ընթերցող, Տեղական, միջազգային, մշակութային, մարզական եւ այլ լուրեր բջջային հեռաձայնի վրայ հայերէնով ստանալու համար, անմիջապէս ներբեռնէ լիբանանեան առաջատար եւ անվճար «INFO 3» յաւելումը, որ հասանելի է Applestore-ի եւ Playstore-ի միջոցաւ:

Այսպիսով դուն հայերէնով եւ վայրկեանը վայրկեանին պիտի իմանաս օրուան վերջին զարգացումները:

**ARARAD DAILY NEWSPAPER**  
MANAGING DIRECTOR: ANI SARAFIAN  
Tel.-Fax: 01-545599 | P.O.Box: 175275 Mar Mikhael  
Beirut | Lebanon | www.araraddaily.com  
email: aradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية عربية | المجلة الأسبوعية التي صرنا قديماً  
تصدر عن شركة منبصر للمطبوعات والنشر (م.م.م.)